15.05.2017թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի համաքաղաքացիներ

Շնորհավորում եմ ձեզ Ընտանիքի միջազգային օրվա առթիվ, որը Հայաստանում նշվում է 2011թ-ից:

Ընտանիքը՝ որպես հասարակության հիմնական օղակ, համամարդկային արժեքների կրողն ու պահպանողն է, լավագույն ավանդույթների փոխանցողը սերունդների և արժեքների ժառանգության կրողը:

Մեր համայնքում ապրող ընտանիքներն էլ սյուներն են մեր պետության կայացման և ամրապնդման, նրանց միջոցով և նրանց շնորհիվ է, որ մեր հասարակության մեջ պահպանվում է համերաշխության և փոխըմբռնման մթնոլորտը:

Ընտանքին այն միջավայրն է, որտեղ մեզանից յուրաքանչյուրը սովորում է բարին գործել և դիմակայել կյանքի դժվարություններին, սովորում է ճանաչել աշխարհը և դառնալ հասարակության լիարժեք անդամ:

Ես գիտեմ՝ շատ ընտանիքներում դժվարությունների պակաս չկա, սակայն ամեն գնով փորձում են այն հաղթահարել, և այդ ճանապարհին տեղական իշխանություններն էլ պատրաստ են կանգնելու յուրաքանչյուր ընտանիքի կողքին:

Հատկապես կարևորում եմ բազմազավակ և բազմանդամ ընտանիքների դերը մեր համայնքի կյանքում: Այդ ընտանիքները օրինակելի դաստիարակության, համերաշխության, խոչընդոտներին դիմակայելու լավագույն օրինակներ են, որոնց նկատմամբ մեր աջակցությունը պետք է լինի մշտական:

Սիրելի համաքաղաքացիներ

Շնորհավորում եմ բոլորիս այս հիանալի տոնի առթիվ: Ընտանիքի օր պետք է լինի յուրաքանչյուր օրը, որի հիմքում պետք է դրվեն այն պահելու, պահպանելու, խնամելու հիմնական գաղափարները:

Ցանկանում եմ, որ մեր ընտանիքներում թևածեն սերն ու խաղաղությունը, որ ընտանիքի անդամները լինեն միմյանց նկատմամբ ուշադիր և հոգատար, որ մեր ընտանիքներում ապրող մարդիկ լինեն առողջ, երջանիկ կայացած և մեր համայնքում բազմապատկվեն ընտանիքները:

Թող Աստված պահապան լինի բոլորի ընտանիքներին: